

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/7

16 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Յունի Գրուպ» ՍՊԸ 24.11.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ 29.09.2014 թ-ի թիվ 5010501 ակտի դեմ:

«Յունի Գրուպ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

04.09.2014–19.09.2014 թթ-ին «Յունի Գրուպ» ՍՊ ընկերությունում ՀՀ Ֆինանսների նախարարության Գյումրու ՏՀՏ կողմից իրականացված ստուգման արդյունքում հայտնաբերվել է ապրանքային մնացորդի պակասորդ, որի արդյունքում լիազոր մարմնի կողմից կազմվել է թիվ 5010501 ակտը:

Համաձայն չլինելով թիվ 5010501 ակտի 23-րդ կետի հետ, ըստ որի 12.492.639 ՀՀ դրամի ապրանքային մնացորդի պակասորդ է արձանագրվել, Գյումրու ՏՀՏ պետին հիմնավոր առարկություն է ուղարկվել դրա վերաբերյալ:

Բացի այդ, նշված տարբերությունն իրականում առաջացել է վաճառվող ապրանքներն ավելի ցածր գներով վաճառելու հետևանքով, որի իրավունքն Ընկերությունն ունեցել է օրենքի ուժով:

2014 թ-ի նոյեմբերի 6-ին ստացվել է թիվ 0942 որոշումը՝ հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին: Համաձայն որոշման Ընկերության կողմից չկատարած պարտավորությունները կազմում են 6.350.173 ՀՀ դրամ, որից 38.782 դրամը կազմում է շահութահարկի պարտավորություն, տույժ 21.629 դրամ, 6.246.320 դրամ տուգանք նախատեսված «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածով և տույժ 0.15 տոկոս:

Այսպիսով, գանգատաբերը որոշման հետ համաձայն է մասնակի՝ ընդամենը շահութահարկի պարտավորության և տույժի գումարի չափով, որն էլ պարտավորվում է վճարել, իսկ մնացած մասով՝ 6.246.320 դրամ գումարի չափով, պարտավորությունը չի ընդունվում, քանի որ այն համարվում է ոչ իրավաչափ և ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ հիմնավորմամբ:

- Լիազոր մարմնի կողմից կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տույժ և տուգանք, որը սույն դեպքում կիրառելի չէ:

- Լիազոր մարմնի կողմից ուշադրության չի արժանացել «ԱԱՀ մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջը, այն չի կիրառվել, որը եթակա էր կիրառման:

- Լիազոր մարմնի կողմից չի պահպանվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35, 37 և 38 հոդվածների պահանջները:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով կից ներկայացվող ապացույցները «Յունի Գրուպ» ՍՊԸ-ն խնդրում է մասնակի անվավեր ճանաչել Գյումրու ՏՀՏ պետի 29.10.2014 թ-ի թիվ 0942 որոշումը ոչ իրավաչափ լինելու պատճառով, այն է՝ անվավեր ճանաչել 29.09.2014 թ-ի թիվ 5010501 ստուգման ակտով ստացադրված 6.246.320 տուգանքը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 21.08.2014 թ-ի թիվ 5010501 հանձնարարագրի «Յունի Գրուպ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև Ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում, կազմվել է ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ 29.09.2014 թ-ի թիվ 5010501 ակտը (այսուհետ նաև Ակտ):

Ակտի 23-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ստուգմանը ներկայացված սկզբնական հաշվապահական փաստաթղթերի և ՏՀՏ ներկայացված հաշվարկների համադրումից պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի մոտ առկա է 12.492.639 դրամի ապրանքային մնացորդի պակասորդ: Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25.2-րդ հոդվածի օրենքով սահմանված կարգով իրականացված ստուգումների արդյունքներով ՀՀ կառավարության սահմանված կարգով պատրաստի արտադրանքի, ապրանքների մատակարարման կամ պահպանման վայրերում պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդ հայտնաբերելու դեպքում ԱԱՀ վճարողից գանձվում է տուգանք պակասորդի գնի (արժեքի) 50%-ի չափով, գումարով 6.246.320 դրամ, որն արտադրանքի, ապրանքների պակասորդի մասով հանդիսանում է վերջնական հարկային պարտավորություն:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25.2-րդ հոդվածի համաձայն. «Օրենքով սահմանված կարգով իրականացված ստուգումների արդյունքներով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով պատրաստի արտադրանքի, ապրանքների մատակարարման կամ պահպանման վայրերում պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդ հայտնաբերվելու դեպքում ավելացված արժեքի հարկ վճարողից գանձվում է տուգանք պակասորդի գնի (արժեքի) 50 տոկոսի չափով»:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25.2-րդ հոդվածում նշված «Պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդ հայտնաբերելու կարգ»-ը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 04.07.2013 թ-ի թիվ 766-Ն որոշմամբ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ստուգման ընթացքում պատրաստի արտադրանքի, ապրանքների մատակարարման կամ պահպանման վայրերում պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդը, որի նակատմամբ կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25.2-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը, հայտնաբերվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, այն է՝ առանց «Պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդ հայտնաբերելու կարգ»-ով նախատեսված դրույթների կիրառման:

Միևնույն ժամանակ, Ակտի 4-րդ կետով լրացուցիչ պարտավորություններ են առաջադրվել նաև ավելացված արժեքի հարկի գծով: Մասնավորապես, Ընկերության կողմից 2011 թ-ի 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկում ՀՀ տարածքում ձեռք բերված 15.000.000 դրամի ծառայությունների դիմաց կատարելով կանխիկ վճարում ցույց է տրվել 216.667 դրամի հաշվանցման ենթակա գումար, իսկ 2.283.333 դրամը ԱԱՀ-ի հաշվարկի 16.2 տողում որպես պակասեցման ենթակա գումար ցույց տալու

